

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ՝ ՎԵՐ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԵԼԻՄԵԱՆԻ

Կիրակի 10 Փետրուար 2013-ին, երեկոյեան ժամը՝ 5:00-ին, Վեր. Յարութին Սելիմեան ընդառաջելով՝ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան հրաւերին, կատարեց լուսաբանական քանախօսութիւն՝ Ամերիկայի հայ Աւետարանչական Ընկերակցութեան Կեդրոնէն ներս, Ա.Մ.Ն. Նիւու Ճրրգի Նահանգին մէջ, վեր առնելով՝ Սուրիոյ դիմագրաւած այժմու պատերազմային իրավիճակը: Սոյն հանդիպումին կիզակետը հանդիսացող Սուրիահայութիւնը, շահագրգռեց բոլոր ներկաները եւ ներկաներուն հետաքրքրութիւնը տեղեկատուութիւն ստանալէ անդին անցնելով յայտնեցին իրենց պատրաստակամութիւնը օգնութեան ձեռք երկարելու Սուրիաբնակ հայ Սուրիացիներուն:



